https://doi.org/10.46991/hc.2025.si1.143

The Role of the "Kachar" Scientific Center in the Advancement of Armenian Studies in Artsakh

Mher Harutyunyan
https://orcid.org/0000-0002-0719-8860
NAS RA Researcher at the Institute of History, Senior Researcher at the History of the Museum of History of Armenia, Chairman of the NGO "Kachar" Scientific Center", Associate Professor, PhD
mherharout@gmail.com

Hovik Avanesov
https://orcid.org/0009-0006-6642-4895
NAS RA student of the Institute of History, lecturer at the Faculty of History of YSU, PhD
hovik.avanesov@ysu.am

Keywords - Artsakh, Shushi, Kachar, Armenian Studies, Culture, Intellectual heritage, Archive, Yearbook, Publishing House, Scientific Conference.

After the declaration of independence, significant progress was made in the Republic of Artsakh in the fields of state-building, as well as in spiritual, cultural, and scientific-educational spheres. To support these processes, the "Kachar" Scientific Center was established in 2006 in Shushi, which played a significant role, particularly in the development of Armenian Studies and the research of Artsakh's history. The professional library and archive of Artsakh's history housed unique materials on the Artsakh Movement, the national liberation war of 1991-1994, and the periodical press published in Artsakh.

In order to address current issues in Armenian Studies and introduce unpublished documents into the scientific discourse, the Center published the "Kachar Bulletin" and later the Yearbook, along with methodological works, collections of documents, and studies on the history

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 143-157.
Received: 14.11.2024
Revised: 01.12.2024
Accepted: 28.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

of journalism in Artsakh. In 2008, in collaboration with the Shusha History Museum, the Center conducted research on newly discovered monuments. In 2011, the Center successfully implemented a grant project aimed at the development of Armenian Studies, engaging young specialists in the field.

A key area of the Center's activity was the organization of international scientific conferences on strategically important topics and the publication of conference materials, which provided a significant boost to the development of Armenian Studies in Artsakh.

In November 2020, Shusha was captured, resulting in the loss of an important part of the intellectual heritage of the Armenian people, which had been carefully collected and preserved at the Center. However, public initiatives to develop the Artsakh school of Armenian Studies continued in Stepanakert, and in 2023, after the complete occupation of Artsakh, the Center moved to Yerevan, where it continues its Armenian Studies research.

The Center's publications have been digitized and are available on the website of the National Library of Armenia.

«Կաճառ» գիտական կենտրոնի դերը Արցախում հայագիտության զարգացման գործում

Մհեր Հարությունյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, Հայաստանի պատմության թանգարանի ավագ գիտաշխատող, «Կաճառ» գիտական կենտրոն» ՀԿ նախագահ, դոցենտ, պ.գ.թ.

Հովիկ Ավանեսով
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.

Հիմնաբառեր - Արցախ, Շուշի, Կաճառ, հայագիտություն, մշակույթ, մտավոր ժառանգություն, արխիվ, տարեգիրք, հրատարակչություն, գիտաժողով:

Անկախության հռչակումից հետո Արցախի Հանրապետությունում առաջընթաց նկատվեց պետականաշինության և հոգևոր-մշակութային ու գիտակրթական ոլորտներում: Դրանց նպաստելուն կոչված հանրային նախաձեռնությունները իրագործելու նպատակով 2006 թվականին Շուշիում հիմնադրվեց «Կաճառ» գիտական

կենտրոնը, որը նշանակալի դեր խաղաց հատկապես հայագիտության զարգացման և Արցախի պատմության ուսումնասիրության գործում: Ստեղծված մասնագիտական գրադարանում ու Արցախի պատմության արխիվում պահպանվում էին եզակի նյութեր Արցախյան շարժման, 1991-1994 թթ. հայրենական պատերազմի և Արցախում լույս տեսած պարբերական մամուլի վերաբերյալ:

Հայագիտության հրատապ հարցերը արծարծելու և անտիպ վավերագրերը գիտական շրջանառության մեջ դնելու նպատակով Կենտրոնը հրատարակեց «Կաճառ» տեղեկագիրը, այնուհետև՝ տարեգիրքը, ուսումնամեթոդական աշխատանքներ, փաստաթղթերի ժողովածուներ և Արցախի լրագրության պատմության մասին ուսումնասիրություններ: 2008 թվականին Շուշիի պատմության թանգարանի հետ համատեղ իրականացվել են նորահայտ հուշարձանների ուսումնասիրություններ: 2011 թվականին Կենտրոնը հաջողությամբ իրականացրեց հայագիտության զարգացմանն ուղղված դրամաշնորհային ծրագիր՝ ներգրավելով երիտասարդ մասնագետների:

Կենտրոնի առանցքային գործունեությունից է ռազմավարական նշանակություն ունեցող թեմաներին նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպումը և դրանցում ներկայացված նյութերի տպագրումը, ինչը յուրահատուկ լիցք հաղորդեց Արցախում հայագիտության զարգացմանը:

2020 թ. նոյեմբերին Շուշի քաղաքը բռնազավթվեց, ինչի պատճառով հայ ժողովրդի մտավոր ժառանգության մի կարևոր մասը, որը խնամքով հավաքվել ու պահվում էր Կենտրոնում, ցավոք, կորուսվեց: Սակայն հայագիտության արցախյան դպրոցի զարգացման հասարակական նախաձեռնությունները շարունակվեցին Ստեփանակերտում, իսկ 2023 թվականին՝ Արցախը ամբողջովին բռնազավթվելուց հետո, Կենտրոնը տեղափոխվեց Երևան, որտեղ կատարվում են հայագիտական հետազոտություններ: Կենտրոնի հրատարակությունները թվայնացվել են և հասանելի են Հայաստանի ազգային գրադարանի կայքում:

Роль научного центра «Качар» в деле развития арменоведения в Арцахе

Мгер Арутюнян
НАН РА Научный сотрудник Институт истории, старший научный сотрудник Музея истории Армении, Председатель НПО «Научный центр «Качар», доцент, к. и. н

Овик Аванесов
НАН РА аспирант Института истории, преподаватель кафедры истории соспредельных стран факультета истории ЕГУ, к.и.н.

Ключевые слова - Арцах, Шуши, Качар, армяноведение, культура, интеллектуальное наследие, архив, ежегодник, издательство, научная конференция .

После провозглашения независимости в Республике Арцах был зафиксирован прогресс в области государственного строительства, а также в духовно-культурной и научно-образовательной сферах. Для содействия этим процессам в 2006 году в Шуши был основан Научный центр «Качар», который сыграл значительную роль в особенности в развитии арменоведения и исследовании истории Арцаха. В созданной профессиональной библиотеке и архиве истории Арцаха хранились уникальные материалы по вопросам Арцахского движения, отечественной войны 1991-1994 годов и периодической прессы, издававшейся в Арцахе.

С целью обсуждения актуальных проблем арменоведения и введения в научный оборот неопубликованных документов Центр издал информационный бюллетень «Качар», а затем ежегодник, методические работы, сборники документов и исследования по истории журналистики Арцаха. В 2008 году, совместно с Музеем истории Шуши, были проведены исследования вновь обнаруженных памятников. В 2011 году Центр успешно реализовал направленный на развитие арменоведения грантовый проект, привлекая молодых специалистов.

Ключевым направлением деятельности Центра является организация международных научных конференций по стратегически важным темам и публикация материалов, что придало особую значимость развитию арменоведения в Арцахе.

В ноябре 2020 года Шуши был захвачен, в результате чего важная часть интеллектуального наследия армянского народа, аккуратно собиравшаяся и хранившаяся в Центре, была, к сожалению, утрачена. Однако общественные инициативы по развитию арцахской школы арменоведения продолжились в Степанакерте, а в 2023 году, после полного захвата Арцаха, Центр переехал в Ереван, где продолжает арменоведческие исследования.

Публикации Центра оцифрованы и доступны на сайте Национальной библиотеки Армении.

* * *

Ամփոփ: Հոդվածի գիտական նորույթը կայանում է գիտական հիմնախնդրի նմանօրինակ առաջադրման, ինչպես նաև, առհասարակ, Ուղեղային կենտրոնների դերի ու նշանակության հրատապության ու կարևորության համատեքստում, որպես այդպիսին,

«Կաճառ» գիտական կենտրոնի (ԿԳԿ) համապատասխան կարգավիճակի ինստիտուցիոնալացման և նպատակասլաց գործունեության վերաիմաստավորման մեջ:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող փաստաթղթերի և նյութերի հիման վրա ամբողջացվում ու ընդհանրացվում է ԿԳԿ-ի գործունեությունը՝ Արցախում հայագիտության զարգացման գործում նրա ունեցած ավանդի նշանակավորման համատեքստում:

Թեմայի արդիականությունը և կարևորությունը բխում են պետության առաջ ծառացած խնդիրների լուծման գործում Ուղեղային կենտրոնների, մասնավորապես՝ ԿԳԿ-ի արդյունավետ դերակատարության պահանջարկից: ՀՀ-ի դեմ անդադար մղվող հիբրիդային պատերազմի շրջանակներում ծավալված տեղեկատվական-քարոզչական արշավում հետևողականորեն խեղաթյուրվում են հակամարտության էությունն ու կերպարը, կեղծվում է պատմությունը և շինծու փաստարկներ են գեներացվում ադրբեջանաթուրքական էքսպանսիոնիստական քաղաքականությունն արդարացնելու համար, վիթխարի միջոցներ են ծախսվում համաշխարհային գիտական համակարգի ու հասարակական կարծիքի վրա ազդելու և հակահայկական թեզերը շրջանառելու համար: Ավելի քան երբևէ հրատապ է գիտության, մշակույթի, տեղեկատվության ու քարոզչության ոլորտներում թշնամու ոտնձգությունների դեմ համակարգված ու անդադրում պայքարելը՝ ճշմարտությունը թիրախային խմբերին հասցնելու և օբյեկտիվ հասարակական կարծիք ձևավորելու նպատակով: Դրան հասնելու համար անհրաժեշտ է զորահավաքի ենթարկել պետության առանց այն էլ սուղ միջոցներն ու հնարավորությունները, համակարգված աշխատանքներ ծավալել ինչպես գիտահետազոտական, այնպես էլ տեղեկատվական-քարոզչական ոլորտներում: Այս առումով գիտական ու մասնագիտական հիմնարկների համապատասխան գործունեության մեջ, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, անհրաժեշտ է ընդգրկել նաև հասարակական նախաձեռնություններով հանդես եկող կազմակերպություններին, առանձին գիտնական-հետազոտողներին կամ նրանց հասարակական միություններին: Հաշվի առնելով ԿԳԿ-ի տասնութամյա գործունեության արդյունքները և վերոհիշյալ խնդիրների լուծման գործում ակտիվ, նախաձեռնողական մասնակցությունը, նպատակահարմար է ընդհանրացնել Կենտրոնի փորձը, ինչը կարող է օգտակար լինել նմանօրինակ այլ կառույցների և դրանց նշանակությանը հանրային հնչեղություն տալու համար:

Թեման առանձին ու խորքային ուսումնասիրության դեռևս չի արժանացել: ԿԳԿ-ի գործունեության առանձին դրվագներ լուսաբանվել են ժամանակի պարբերական մամուլի էջերում [Գաբրիելյան Ա., Ազատ Արցախ, 3. 35. 2006, 7; Գաբրիելյան Կ., Ազգ, 8.148, 2006, 3; Հովսեփյան Ն., Մարտիկ, 3-4.12. 2006, 7; Հայրենիք, 3. 6. 2006, 3; «Ազատ Արցախ», 7. 89, 2006, 6; Հարությունյան Ա., Մարտիկ, 8. 31. 2006, 5; Հարությունյան Վ., Կաճառ, 6. 4. 2006, 1;

«Ազգ», 2.32, 2006, 2; Օհանջանյան Ն., Ազատ Արցախ, 8. 95. 2006, 1-2; Հարությունյան 2007, 7; Գրիգորյան Լ. Ազատ Արցախ, 9. 122. 2008, 2 և այլն]: Տարեկան հաշվետվությունների հիման վրա Կենտրոնի հիմնադիր-ղեկավարը «Կաճառ» տեղեկագրում (2007-ից՝ տարեգրքում) պարբերաբար հանդես է եկել տեղեկատվական հրապարակումներով [Հարությունյան 2008, 5-29; Հարությունյան 2014, 3-15; Հարությունյան 2015, 3-18; Հարությունյան 2017, 3-36]: Անհրաժեշտ տվյալներ են պարունակում տարեգրքի «Լրատու» բաժնում զետեղված տեղեկատվական նյութերը, որոնք պատրաստել են Կենտրոնի գիտաշխատողները կամ էլ միջոցառումները լուսաբանող լրագրողները:

Ժամանակին Կենտրոնի գործունեությունը լուսաբանելու նպատակով ԱՀ ԱԺ և կառավարության պաշտոնաթերթի հատկացրած էջում հրապարակվում էին առավել կարևոր իրադարձությունները [Ազատ Արցախ, 7. 89. 2006, 6]:

Երիտասարդ պատմաբան Հ. Ավանեսովը, որը ակտիվորեն համագործակցել, իսկ այնուհետև անդամագրվել է Կենտրոնին, միջազգային գիտաժողովում ներկայացրել, ապա հրատարակել է Արցախյան ազգային ազատագրական պայքարի տարեգրության գիտական հիմքերը ստեղծելու և համակողմանի ուսումնասիրելու գործում ԿԳԿ-ի դերը վերահիմաստավորող զեկուցումը [Ավանեսով 2017, 21-26]: Դրան նախորդել են «Կաճառ» տարեգրքի առանձին համարներին նվիրված պատմաբան-գործընկերների գրախոսությունների հրապարակումը գիտական ամսագրերում [Վարդանյան 2016, 467-469; Ավանեսով 2016, 461-464] և պարբերական մամուլում [Սարուխանյան Վ., Հետք, 2010; Ավանեսով Հ., Մարտիկ, 7. 27-28. 2016, 6]:

Հետազոտությունն իրականացվել է ըստ ժամանակակից մեթոդաբանական մոտեցումների և սկզբունքների, մասնավորապես՝ անաչառ ու անկողմնակալ կերպով, պատմական ճշմարտության գերակայությամբ: Ուսումնասիրությունը կատարվել է պատմականության սկզբունքով՝ ԿԳԿ-ի գործունեությանը առնչվող յուրաքանչյուր երևույթ դիտարկելով իր ծագման, զարգացման, կոնկրետ պատմական պայմանավորվածության և անհատականության մեջ: Այս մոտեցումը նաև կենտրոնանում է քննադատական մտքի զարգացման վրա՝ կարևորելով պատմական համատեքստի առաջնահերթությունը ցանկացած տեսակի տեքստերի մեկնաբանության մեջ: Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմահամեմատական և ռետրոսպեկտիվ (հետադարձ) մեթոդները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պատճառահետևանքային կապերին և պատմական օրինաչափություններին:

Ուղեղային կենտրոն Արցախում: Անկախության հռչակումից հետո սկսված պետականաշինության գործընթացին զուգահեռ ԱՀ-ում զարգանում էին նաև գիտությունն ու մշակույթը: Պետական համապատասխան կառույցների ձևավորումից բացի հանրային նախաձեռնություններով ստեղծվում էին գիտակրթական և մշակութային հաստատություններ: Այդպիսի նախաձեռնություններից էր Շուշիում մի խումբ

մտավորականների 2006 թվականին ստեղծած ԿԳԿ-ը [Վահանյան Ի., Կաճառ, 3. 1. 2006, 1, 4]:

Հաղթելով Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կրթության ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար հայտարարված դրամաշնորհների բաց մրցույթում՝ ԿԳԿ-ը 2011 թ. իրականացրել է «Արցախում հայագիտության զարգացման համար գիտական հիմքերի ստեղծում» ծրագիրը: Ներգրավվել են հայագիտության ոլորտի ասպիրանտներ, մագիստրոսներ, ուսանողներ, երիտասարդ մասնագետներ, որոնք հետագայում նկատելի դերակատարում են ունեցել այդ ասպարեզում: Ծրագրի շնորհիվ համակարգված հայագիտական ուղղվածության գիտական գրադարանի և արխիվի գործունեությունը նպաստել է Արցախում հրատապ գիտական աշխատանքների ու հետազոտությունների ծավալմանը, հակամարտության վերաբերյալ փորձագիտական եզրակացությունների համար անհրաժեշտ սկզբնաղբյուրների շրջանառությանը, ինչպես նաև Արցախի պատմության աղբյուրագիտական բազայի ընդլայնմանը [ԿԳԿ, ֆ. 333, գ. 8, թ. 9-23]:

ԿԳԿ-ի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Արցախում բանակաշինության գործընթացը և ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգում ՊԲ-ի ունեցած կարևոր դերակատարության արժևորումը:

Գործունեության տասնութ տարիների ընթացքում Կենտրոնն իր ուրույն դերն ունեցավ նաև Շուշիում ընդհանրապես գիտության և մշակույթի, մասնավորապես հայագիտության արցախյան դպրոցի զարգացման գործում [Պետրոսյան Ա., Ա1+ 2024]:

Հիմնակազմ գիտական գրադարան: Հիմնադրումից ի վեր Կենտրոնի գիտաշխատողները ձեռնամուխ եղան հիմնակազմ գիտական գրադարանի ստեղծման աշխատանքներին [Ք. Յու., Կաճառ, 11. 9.2006, 1; Հովհաննիսյան 2008, 227-230]: Ընդհանուր առմամբ հավաքվել է շուրջ 20 հազար կտոր, հիմնականում հայագիտական բնույթի գրականություն [ԿԳԱ, ֆ. 333, գ. 21, թ. 2]:

Գրադարանում հավաքվել են նաև Արցախի հայտնի մտավորականների անձնական գրադարանները և գործունեության ընթացքում կուտակված նյութերը: Գրադարանի աշխատողներ Հրանուշ Մկրտչյանը, Լյուսյա Հովհաննիսյանը և ուրիշներ հասարակական հիմունքներով ցուցակագրել են գրքերը, կազմել քարտարաններ, դասակարգել գրադարակներում, սպասարկել ընթերցողներին:

Կազմակերպվել են գրքերի շնորհանդեսներ՝ ընթերցողների հետ հեղինակների հետադարձ կապն ամրապնդելու և հայագիտության նվաճումները հանրահռչակելու նպատակով [Հարությունյան 2007, 7; Ավանեսով Հ., Նոր Շահումյան, 17-18, 2015, 6]:

Գրքերի թեմատիկ ցուցահանդեսները նվիրված են եղել տարբեր նշանավոր իրադարձությունների: Հատկանշելի է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին

նվիրված հայ ժողովրդի պահանջատիրության վերաբերյալ «ԿԱՃԱՌ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ֆեյսբուքյան էջում այդ ողբերգությունը և ինքնապաշտպանական-ազատագրական պայքարը լուսաբանող շուրջ երկու հարյուր գրքերի առցանց ցուցահանդեսը (20 շարք), որն ունեցել է ոչ միայն հարյուրավոր այցելուներ, այլ նաև տարածվել է ակտիվ օգտատերերի շրջանում [Հարությունյան 2017, 23]:

Արցախի պատմության արխիվի ստեղծումը: Կարևոր նշանակություն է ունեցել Արցախի պատմության՝ իր տեսակով եզակի արխիվի ստեղծումը, որն ուներ Արցախյան շարժման, 1991-1994 թթ. հայրենական պատերազմի և Արցախի պարբերական մամուլի բաժինները: Արխիվի համալրման և ձեռքբերումների մասին տեղեկությունները պարբերաբար հրապարակվել են «Կաճառ» տարեգրքում: Մեծ ցավով ենք նշում, որ եզակի արխիվային նյութերը մնացել են բռնազավթված Շուշիում: Որոշ նմուշներ հրաշքով փրկվել են ժամանակին լուսապատճենելու և գիտաշխատողների մոտ պատահականորեն մնալու շնորհիվ: Քանիցս դիմել էինք Արցախի իշխանություններին տեխնիկական միջոցներով կամ գոնե հաստիքային աշխատակիցով ապահովելու խնդրանքով, սակայն բյուրոկրատական համակարգի անհաղորդության պատճառով այդպես էլ անկատար մնաց արժեքավոր վավերագրերը թվայնացնելու մեր ծրագիրը:

Հրատարակչական աշխատանքներ: Համանուն գիտական հրատարակչությունը 2006 թ. հրատարկեց «Կաճառ» տեղեկագիրի 9 համար 500 տպաքանակով, այնուհետև՝ համանուն տարեգիրքի 16 հատորներ [https://tert.nla.am/mamul/Kacar2006/Table.html]: Ավելի ուշ հրատարակվեցին ուսումնամեթոդական ձեռնարկներ, Արցախի ժուռնալիստների միության հետ համատեղ, Արցախի պարբերական մամուլի պատմության ու Արցախի լրագրողական ընտանիքի հին ու նոր ներկայացուցիչների մասին աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ և այլ մատենաշարներ:

Կենտրոնի նախաձեռնությամբ հրատարակվել են Արցախի մի շարք բնակավայրերին նվիրված ուսումնասիրություններ: ԿԳԿ-ի գործունեության առանցքային ուղղություններից էր Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությանը և պետական մակարդակով իրականացվող պատմական փաստերի և իրադարձությունների խեղաթյուրմանը հակազդելը: Այդ նպատակով Կենտրոնի կողմից օտար լեզուներով հրապարակվել են փաստաթղթերի ժողովածուներ և գիտաքաղաքական նշանակություն ունեցող ուսումնասիրություններ:

Մասնագիտական գնահատականներ ու գրախոսություններ են տպագրվել Կենտրոնի գիտաշխատողների արդիական թեմաներով հրատարակությունների մասին [Աբրահամյան 2010, 335-339; Սարուխանյան 2010; Վարդանյան 2015, 474-476; Մինասյան, Վարդանյան 2017, 507-512; Հայացք Երևանից 2019]:

Կենտրոնի հրատարակությունների մատչելիությունը ապահովելու համար Հայաստանի ազգային գրադարանի շտեմարաններում տեղադրված են դրանց թվայնացված տարբերակները:

Միջազգային գիտաժողովներ: Կենտրոնի առանցքային գործունեության կարևոր ուղղություններից էր ռազմավարական նշանակություն ունեցող թեմաներին նվիրված միջազգային գիտաժողովների կազմակերպման և դրանցում ներկայացված նյութերի տպագրման նախաձեռնումը, ինչը յուրահատուկ լիցք հաղորդեց Արցախում հայագիտության զարգացմանը:

2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում անցկացվել է Շուշի քաղաքի 1920 թ. մարտի 23-ի ողբերգության 90-րդ և Բաքվի ջարդերի 20-րդ տարելիցներին նվիրված «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ» թեմայով միջազգային գիտագործնական կոնֆերանսը [«Կաճառ» գք. 4]:

Բավական ներկայացուցչական էր և լայն արձագանք գտավ Հայկական գրատպության 500-ամյա հոբելյանին նվիրված «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» թեմայով միջազգային կոնֆերանսը [«Կաճառ» գք. 6]: 2020 թ. ողբերգության նախօրեին նախազգուշացում և կարևոր ուղերձներ էր պարունակում «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)» թեմայով միջազգային առցանց գիտաժողովը [Շուշի, 2020 թ. հուլիսի 15-16], որը նվիրված էր Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին, [Ադրբեջանի ցեղասպանական վարքը 2021]:

Արցախի պարբերական մամուլի արխիվի ստեղծում: Արցախի ժուռնալիստների միության (ԱԺՄ) հետ համատեղ Կենտրոնը նպաստել է լրագրության տեսության և պատմության ուսումնասիրությանը: Լրագրողական հանրագիտակը ներկայացնում է արցախցի լրագրողների կենսագրական ու մատենագիտական տվյալները՝ ընդգրկելով XVIII դարից մինչև մեր օրերը: Արժեքավոր տեղեկությունները հավաքվել են տարբեր արխիվներից, համապատասխան գրականությունից և հարցաթերթիկների միջոցով [Լրագրողական հանրագիտակ 2012]:

Երկարատև ուսումնասիրությունների արդյունքում նոր տվյալներով ու եզրակացություններով զգալիորեն հարստացվել է Արցախի մամուլի պատմությունը [Հարությունյան 2010; Հարությունյան 2012; Арутюнян М. 2014, 376-386; Арутюнян Ю. 2014, 394-400]:

2018 թ. հուլիսի 12-ին ԱԺՄ-ի և ԿԳԿ-ի համատեղ կազմակերպած «Կլոր սեղանը» նվիրված էր Շուշիի գրահրատարակչության 190-ամյակին: Քննարկվել են մեր նախնիներից ժառանգած մշակութային արժեքների և Շուշիի գրահրատարակչական ավանդույթների վերակենդանացման ուղիները: Բանախոսները կարևորել են Շուշիի

գրահրատարակչական պատմությունը, հոգևոր-մշակութային նշանակությունը և քաղաքում նոր տպարանի հիմնադրման գաղափարը՝ հին գրքերը վերահրատարակելու, գրահրատարակչական ավանդույթները շարունակելու և, առհասարակ, մշակութային ժառանգությունը պահպանելու նպատակով [Պետրոսյան Ա., Բերդ, 13.07. 2018, 1; Սուքիասյան Գ., Մանկավարժական համալսարան, 9. 11. 2018, 5]: Այդ նախաձեռնությունն արժանացել է մասնագետների բարձր գնահատականին [Սուքիասյան Գ., Հայաստանի Հանրապետություն, 2021]:

Հայագիտական գրքերի շնորհանդեսներ: 2007 թ. տրվել է գրքերի շնորհանդեսների մեկնարկը: Խորհրդանշական էր Ժ. Հակոբյանի «Ղարաբաղի ճակատագիրը» գրքի շնորհանդեսի կազմակերպումը հենց Շուշիում [Հարությունյան Վ., Ազատ Արցախ, 9. 101. 2007, 7]:

2018 թ. հուլիսի 12-ին ԱԺՄ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Հայաստան. 1988-2018 թթ» գիրք-ալբոմի շնորհանդեսը, որում տպագրված են ՀՀ-ում և Արցախում վերջին 30 տարիների ընթացքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների մասին պատմող աշխարհի տարբեր երկրների 29 ճանաչված լուսանկարիչների 300 լուսանկարները [Պետրոսյան Ա., Բերդ, 13.07. 2018, 1]:

2020 թ. փետրվարի 21-ին ԱԺՄ-ում կայացած Արտաշես Վրույրի «Անիում» գրքի շնորհանդեսին կարևորվեց հայ ժողովրդի մտավոր ժառանգության արդիական հնչեղություն և նշանակություն ունեցող նմուշները վերահրատարակելու և հանրահռչակելու «Անի» կենտրոնի ու մասնավորապես Թ. Հակոբյանի նախաձեռնությունը [Պետրոսյան Ա., Բերդ, 2020, 1]:

Տեղեկատվական պայքարի ճակատում: Պատմական փաստերի և ուսումնասիրությունների հիման վրա մի շարք կարևոր քաղաքական հայտարարություններ են ընդունվել, որոնք քննադատել են ադրբեջանական քարոզչամեքենայի կեղծարարությունները և դատապարտել ԱՀ-ի դեմ վարվող ահաբեկչական, զավթողական ու ցեղասպանական քաղաքականությունը:

Շուշիի հայ բնակչության ջարդերի 91-րդ տարելիցի առթիվ ԿԳԿ-ում կազմակերպված «Կլոր» սեղանի [Ահյան 2015, 222], Շուշիի հայ բնակչության կոտորածների 94-րդ տարելիցի առթիվ ԱրՊՀ ՈւԳԸ-ի, ԿԳԿ-ի և Շուշիի պատմության թանգարանի կազմակերպած «Կլոր սեղանի» մասնակիցների ընդունած հայտարարությունները [Խաչատրյան 2017] դատապարտել են Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությունը և երիցս բարձրաձայնել ալիևյան բռնապետությանը միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության մասին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական ահաբեկչական տանդեմը լայնածավալ պատերազմ սանձազերծեց ԱՀ-ի դեմ, ինչի հետևանքով բազմաթիվ

բնակավայրեի հետ նաև բռնազավթվեց Շուշին, որտեղ էլ մնացին Կենտրոնի հարուստ արխիվն ու գրադարանը: ԿԳԿ-ն իր գործունեությունը շարունակեց ԱՀ մայրաքաղաք Ստեփանակերտում, գիտահետազոտական նոր նախաձեռնությունները կյանքի կոչելուն զուգահեռ իրականացվեցին նոր գիտական գրադարանի և արխվի ստեղծման աշխատանքները:

2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի ցեղասպանական գործողությունների հետևանքով հայաթափվեց Արցախը և ամբողջությամբ բռնազավթվեց թուրք-ադրբեջանական ահաբեկչական տանդեմի կողմից: Ներկայումս կենտրոնն իր գործունեությունը շարունակում է Երևանում՝ զբաղվելով Արցախին նվիրված գիտահետազոտական աշխատանքներով, որոնց արդյունքների հրատարակումը կոչված է ՀՀ-ի դեմ վարվող հիբրիդային պատերազմի տեղեկատվաքարոզչական ճակատում ագրեսիվ հարձակումներին արժանի հակահարված տալու համար ծանրակշիռ փաստարկների ու գիտական հիմքերի ամրապնդմանը:

Եզրակացություններ: Այսպիսով, ԿԳԿ-ի նպատակներն ու խնդիրները պայմանավորված են տեսանելի մարտահրավերները պատեհաժամորեն կանխելու կամ հաղթահարելու անհրաժեշտությամբ: Կենտրոնի գործունեությունը նպատակաուղղված է եղել իրավիճակային ու ռազմավարական վերլուծությունների կատարմանը, առավել հրատապ հիմնախնդիրների լուծման ռազմավարության, առաջարկությունների և կանխատեսումների մշակմանը, պետության ներքին ու արտաքին քաղաքականության բարեփոխումների շուրջ տեղեկատվական դրական (բարենպաստ) միջավայրի ստեղծմանը, տեղեկատվական ագրեսիայից հասարակության լայն շերտերի պաշտպանությանը, պետության շահերից բխող որոշումների կորզման նպատակով տարբեր պետությունների օրենսդիր և գործադիր մարմինների վրա ճնշում գործադրելը, ներդրումների և մշտական բնակության համար հրապուրիչ վարկանիշի կայունացմանը, հասարակության և իշխանությունների փոխվստահության ամրապնդմանը, ԶՏՄ-ների դերի և որակի, հանրության տեղեկատվական գրագիտության մակարդակի բարձրացմանը և այլն:

Հայագիտության բնագավառում գիտական նորույթն են Արցախյան շարժման պատմության պարբերացումը, ՊԲ կազմկավորման, մարտական ուղու պատմության առաջին գիտական ուսումնասիրությունը, Արցախյան պատերազմի և ՊԲ պատմության պարբերացումները, Շուշիի 1920 թ. մարտյան եղեռնագործության պատմության գիտական ուսումնասիրությունը, Արևելյան Հայաստանի և Արցախի հայ բնակչության ցեղասպանության քաղաքականության համար Ադրբեջանի միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու խոսույթի ակտիվացումը, Արցախի պարբերական մամուլի պատմության ուսումնասիրությունների շարունակումն ու նորովի վերաիմաստավորումը և այլն:

ԿԳԿ-ի օրինակով ակնհայտ է դառնում ՀՀ-ում ուղեղային կենտրոնների ցանցի ընդլայնման ու դրանց համար գործունեության հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտությունը, ինչը մեծապես կնպաստեր հայոց պետականության առաջ ծառացած մարտահրավերների հաղթահարման արդյունավետ ուղիների ու միջոցների տեսական հիմնավորումներին:

Գրականության ցանկ

Azg, 2. 32, 2006, ej 2: **(in Armenian)**

Azat Arts'akh, 7. 89, 2006, ej 6: **(in Armenian)**

Abrahamyan 2010 - Abrahamyan H., Ogtakar usumnamet'vodakan dzerrnark, «Kacharr» (KGK-i taregirk'): Gk'. 4(47-58), Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2010, ej 335-339: **(in Armenian)**

Adrbejani ts'eghaspanakan vark'y 2021 - Adrbejani ts'eghaspanakan vark'y. patmut'yun yev ardiakanut'yun (iravak'aghak'akan gnahatakanits' minch'ev mijazgayin dataran): Mijazgayin arrts'ants' gitazhoghov, nvirvats Shushii hay bnakch'ut'yan ts'eghaspanut'yan 100-rd tarelits'in (Shushi, 2020 t'. hulisi 15-16), zekuts'umneri zhoghovatsu, kaz. yev khmb., M. A. Harut'yunyan, Yerevan, «Edit print» hrat., 2021, 552 ej + 32 ej nerdir: **(in Armenian)**

Ahyan 2015 - Ahyan M., «Klor seghan», nvirvats Shushii martyan voghbergut'yan 91-rd tarelits'in, Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 7 (83-94), 2013, Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2015, ej 219-222: **(in Armenian)**

Avanesov H.- Avanesov H., Grk'i shnorhandes Shushii «Kacharr» gitakan kentronum, Nor Shahumyan, 17-18, 2015, ej 6: **(in Armenian)**

Avanesov 2016 - Avanesov H., Arts'akhyan azatamarti taregrut'yan steghtsman chanaparhin. «Kacharr» (KGK-i taregirk'): Gk'. 3. Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2014, 272 ej, «Mesrop Mashtots'» Hamalsarani Lratu (gitakan hodvatsneri parberakan zhoghovatsu), Yerevan, Limush, 2016, ej 461-464: (https://arar.sci.am/dlibra/publication/389026/edition/359814?language=en) **(in Armenian)**

Avanesov H.- Avanesov H., Arts'akhyan azatamarti taregrut'yan steghtsman chanaparhin. «Kacharr» (KGK-i taregirk'): Girk' 3. Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2014, 272 ej, Martik, 7. 27-28 2016, ej 6: **(in Armenian)**

Avanesov 2017 - Avanesov H., «Kacharr» gitakan kentrony yev Arts'akhyan azgayin azatagrakan payk'ari taregrut'yuny, khmb., «Kovkasy` mer yndhanur tun» mijazgayin gitazhoghovi hodvatsneri zhoghovatsu, Step'anakert, Dizak plyus, ej 21-26: **(in Armenian)**

Gabriyelyan A., Shushii anmegh zoheri hishatakin, Azat Arts'akh, 3. 35. 2006, ej 7: **(in Armenian)**

Gabriyelyan K., Verakangnel mer divanagitakan hmayk'y[Klor seghan Step'anakertum], Azg, 8.148, 2006, ej 3: **(in Armenian)**

Grigoryan L., Hanrahavak' Shushium, Azat Arts'akh, 9. 122. 2008, ej 2: **(in Armenian)**

Lragroghakan hanragitak 2012 (https://shushiikachargitkentron.blogspot.com/p/blog-page.html): **(in Armenian)**

Khach'atryan 2017 - Khach'atryan S., Ants'yali dasery mez het yen, Kacharr taregirk', Gk'. 8 (95-106), Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2017, ej 217-220: **(in Armenian)**

«Kacharr» gk'. 4 - Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 4, Adrbejani petakan ahabekch'ut'yuny yev et'nikakan ztumneri k'aghak'akanut'yuny Lerrnayin Gharabaghi dem, khmb., Harut'yunyan M., Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2010, 348 ej: **(in Armenian)**

«Kacharr» gk'. 6 - Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 6(71-82), 2012, Shushin` haykakan mshakuyt'i ojakh (Haykakan gratput'yan 500-amyakin nvirvats mijazgayin gitakan konferansi zekuts'umner), Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2014, 240 ej + 16 ej nk.: **(in Armenian)**

KGK - «Kacharr» gitakan kentroni arkhiv, f. 333, g. 8, t'. 9-23 **(in Armenian)**

KGA - «Kacharr» gitakan kentroni arkhiv, f. 333, g. 21, t'. 2: **(in Armenian)**

Hayrenik', 3. 6. 2006, ej 3: **(in Armenian)**

Hayats'k' Yerevanits' 2019 - Mher Harut'yunyan, Arts'akhyan sharzhman patmagrut'yan himnaharts'ery (Mas I) Dektemberi 13 https://acnis.am/hy/book-review/43-2019 **(in Armenian)**

Harut'yunyan A., Adrbejan-LGHH hakamartut'yan k'aghak'akan yent'akhork'ery, Martik, 8. 31. 2006, ej 5: **(in Armenian)**

Harut'yunyan 2008 – Harut'yunyan M., «Kacharr» gitakan kentroni gortsuneut'yuny (2006 t'. p'etrvari 20 – 2007 t'. dektemberi 20), Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 1: Khmb.` M. A. Harut'yunyani, Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2008, ej 5-29: **(in Armenian)**

Harut'yunyan 2010 – Harut'yunyan M., Arts'akhi parberakan mamuli patmut'yunits': Arts'akhi parberakan mamuli matenagtut'yun (1874-2009t't'.), Patmak'nnakan neratsut'yamb, tsanot'agrut'yunnerov, meknabanut'yunnerov, Step'anakert, «Dizak plyus», 2010, 240 ej (https://haygirk.nla.am/upload/1941-/arcaxi_parberakan_mamuli_patm_2010.pdf) **(in Armenian)**

Harut'yunyan 2012 - Harut'yunyan M. Shushin` vorpes hay mamuli kentron https://shushiikachargitkentron.blogspot.com/p/aouaae-u-aoe-iuiau-naoauaoyuy.html **(in Armenian)**

Harut'yunyan 2014 - Harut'yunyan M., «Kacharr» gitakan kentron» hasarakakan kazmakerput'yan 2009 t'. gortsuneut'yan masin, Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 3(35-46), 2009, Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2014, ej 3-15: **(in Armenian)**

Harut'yunyan 2015 - Harut'yunyan M., «Kacharr» gitakan kentron» hasarakakan kazmakerput'yan gortsuneut'yuny 2010-2013 t'vakannerin, Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 7 (83-94), 2013, Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., 2015, ej 3-18: **(in Armenian)**

Harut'yunyan 2017 - Harut'yunyan M., «Kacharr» gitakan kentron» hasarakakan kazmakerput'yan 2014-2015 t't'. gortsuneut'yan masin, Kacharr taregirk', Gk'. 9 (107-118), Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat., ej 3-36: **(in Armenian)**

Harut'yunyan 2022 - Harut'yunyan M., Arts'akhi Hanrapetut'yunum ugheghayin kentroni ardi khndirneri u arrajnahert'ut'yunneri masin, Gitut'yan yev krt'ut'yan dery petut'yan zargats'man gortsum, «Mesrop Mashtots'» Hamalsarani 25-amyakin nvirvats mijazgayin gitazhoghov (29 hoktemberi, Step'anakert, 2022 t'.), ej 115-133 (https://hal.science/hal-04025391v2/document) **(in Armenian)**

Harut'yunyan V., Gitakan kentrony gortsum e, Kacharr, 6. 4. 2006, ej 1: **(in Armenian)**

Harut'yunyan V., «Gharabaghi chakatagiry» grk'i shnorhandesy Shushium, Azat Arts'akh, 9. 101. 2007, ej 7: **(in Armenian)**

Hovhannisyan 2008 - Hovhannisyan L., Himnakazm gitakan gradarani steghtsman chanaparhin, Kacharr (KGK-i taregirk'): Gk'. 1(10-22): Khmb.` M. A. Harut'yunyani, Shushi, «Kacharr» gitakan kentroni hrat.n, 2008, ej 227-230: **(in Armenian)**

Hovsep'yan N., Yeritasard serundy datapartum e, Martik, 3-4.12. 2006, ej 7: **(in Armenian)**

Minasyan, Vardanyan 2017 - Minasyan E., Vardanyan A., Patmagitakan ushagrav ashkhatut'yun, Patmut'yun yev mshakuyt', ej 507-512 (http://publications.ysu.am/wp-content/uploads/2017/09/Graxosutyun.pdf): **(in Armenian)**

Petrosyan A., Shushii grahratarkch'ut'yan 190-amyakin nvirvats klor seghan 13.07. 2018, ej 1 http://berdpress.com/news/842--190- **(in Armenian)**

Petrosyan A., Grk'i shnorhandes Arts'akhi zhurrnalistneri miut'yunum, Berd, 2020, ej 1 http://berdpress.com/news/1168-2020-02-22-09-11-53 **(in Armenian)**

Petrosyan A., Mher Harut'yunyan. Shushium mtavor vit'khari harstut'yan korsti darry dasy sovorets'rets' iratesoren gnahatel steghtsvats iravichaky. A1+ 2024, https://www.aravot.am/2024/07/14/1432627/

Sarukhanyan V., Nor girk`` Arts'akhi parberakan mamuli masin, Hetk', 2010 https://hetq.am/hy/article/13583 **(in Armenian)**

Suk'iasyan G., Nshvets' Shushii gratput'yan 190-amyaky, Mankavarzhakan hamalsaran, 9. 11. 2018, ej 5 (https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Mankavarjakanhamalsaran2003/11.pdf) **(in Armenian)**

Suk'iasyan 2020 - Suk'iasyan G., Girk'y yev gradaranayin-teghekatvakan mshakuyt'y Arts'akhum: Usumnakan dzerrnark, Yerevan, Hegh. hrat., 108 ej: **(in Armenian)**

Suk'iasyan G., Azgayin lezvov arrajin tpagrut'yunn irakanats'noghnery hayern ein, Hayastani Hanrapetut'yun, 2021 (https://hhpress.am/aylq/2021/7098/) **(in Armenian)**

Vahanyan I., Shushium steghtsvets' gitakan kentron (Teghekatvakan haghordagrut'yun «Kacharr» gitakan kentron» hasarakakan kazmakerput'yan himnadir hamazhoghovi masin), Kacharr, 3. 1. 2006, 1, 4:

Vardanyan 2015- Vardanyan A., M. A. Harut'yunyan. Ants'yaly mez het e. veragnahatumner, khorhrdatsut'yunner, SH., «Kacharr» gitakan kentron, 2015, 96 ej: Mesrop Mashtots' hamalsarani Lratu, ej 474-476: https://arar.sci.am/dlibra/publication/388926/edition/359714/content **(in Armenian)**

Vardanyan 2016 - Vardanyan A., «Kacharr» (KGK-i taregirk'): Girk' 6, Shushin` haykakan mshakuyt'i ojakh (Mijazgayin gitakan konferansi zekuts'umner), Shushi, «Kacharr» gitakan kentroni hratarakch'ut'yun, 2014, 240 ej: Mesrop Mashtots' hamalsarani Lratu (gitakan hodvatsneri parberakan zhoghovatsu), 2016, Yerevan, Limush, ej 467-469: https://arar.sci.am/dlibra/publication/389028/edition/359816/content **(in Armenian)**

K'. Yu., Himnarar gitakan gradaran. khndirner u zargats'man herrankarner, Kacharr, 11. 9.2006, ej 1: **(in Armenian)**

Ohanjanyan N., Miats'man amenakarch chanaparhy` ankakhut'yunn e, Azat Arts'akh, 8. 95. 2006, ej 1-2: **(in Armenian)**

Arutyunyan M. 2014 - Arutyunyan M., Izdatel'skoye delo i periodika v Shushi kak faktor razvitiya Armyanskoy obshchestvenno-politicheskoy i nauchnoy mysli, Strategicheskiye bezopasnostnyye issledovaniya (nauchno-ekspertnaya seriya), T. 4, Nauch. ruk.: G. S. Kotandzhyan, Yerevan, Institut

natsional'nykh strategicheskikh issledovaniy imeni D. Kanayana Ministerstva Oborony Respubliki Armeniya, 2014, s. 376-386. **(in Russian)**

Arutyunyan YU. 2014 - Arutyunyan YU., Inoyazychnyye periodicheskiye izdaniya Shushi kak svidetel'stva dominirovaniya Armyanskoy kul'tury do 20-ykh gg. XX veka, Strategicheskiye bezopasnostnyye issledovaniya (nauchno-ekspertnaya seriya), T. 4, Nauch. ruk.: G. S. Kotandzhyan, Yerevan, Institut natsional'nykh strategicheskikh issledovaniy imeni D. Kanayana Ministerstva Oborony Respubliki Armeniya, 2014, s. 394-400. **(in Russian)**